08.06.2023թ.-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պետք է պահպանվեն մինչև սույն վճռի կատարումը, որից հետո դրանք ենթակա են վարացման:

Եզրափակիչ մաս.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189, 191-192, 198, 234.12 հոդվածների պահանջներով, դատարանը՝

Վճռեց

1.«Նիկ Դավ Գրուպ» ԲԲ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 21.10.2022թ.-ին կայացրած որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել .

1.1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 21.10.2022թ.-ին կայացրած «Նիկ Դավ Գրուպ» ԲԲ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցանկում ներառելու վերաբերյալ ճանաչել անվավեր:

2.ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲ ընկերության բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար:

3.Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 08.06.2023թ.-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև սույն վճռի օրինական կատարումը, որից հետո՝ վերացնել:

5.Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակելու պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Էդ. Ամալյան**